

“կուզեն ծառայել Աստուծոյ՝ չէ թէ նորոգութեամբ շողոյն, այլ մեռելութեամբ գրոյն”:

Իսկ ըստ մեզ՝ հարկ է որ խոստովանինք անպատրուակ որ առաջիկայ հանգանակը մեզի սեպհական չէ. կաթողիկէ Ակիզիցոյ կը վերաբերի, անոր հեղինակը շայաստանէն դուրս պէտք է փրնտուել. յոյն բնագիրը, գրեթէ 20 տարի կայ, ձեռագիրներէն մտադարձներէն ամբողջ ի լոյս ելաւ, ինչպէս անմիջապէս պիտ’որ տեսնենք: Ասիկայ նաեւ անկէ ալ առաջ միշտ, Ապիփանու գործոց մէջ, զոնէ ըստ մեծագոյն մասին, կեցած էր. բայց չեմ գիտեր, ինչպէս եղած է որ ցայժմ ամենուն մտադրութենէ փախած է ասոր եւ մեր հանգանակին մէջ եղած նոյնութիւնը կամ նմանութիւնը:

## 2.

ծրագրովն յռնակումն է:

Եթէ շայոց ըսուած աս հանգանակը, անանկ ինչպէս որ հիմայ առ մեզ կը գործածուի, յոյն բնագրին հետ համեմատենք, չարդարանար ան խղճմնոտութիւնը կամ ամենամանր իրաց յարումը՝ որուն վրայ Մսեր իրեններուն հետ կը պարծի՝ որ եւ իցէ ժամանակաց համար: Ըն հայ բնագրին նաեւ ի մանունս անփոփոխութիւնը հազիւ գրեթէ վերջին 300 տարուան գործք է. վասն զի իրօք սոյն միջոցին մէջ ոչ ի ձեռագիրս եւ ոչ ի տպագրութիւնս հայ բնագիրը գրեթէ վանկով մ’իսկ չի զանազանիր: Բայց որչափ տարբեր է իրաց կերպարանքը՝ եթէ մէյմը ձեռագիր մտաննից դարանները բացուին: շ. Փափազեան երկու երեք տեղ մինակ՝ ձեռագրաց տարբերութիւն գիտած եւ նշանակած էր վերոյիշեալ գործքին մէջ. Փէշտիմարձեան՝ աւելի շատ. շ. Աւգերեան՝ 20 ձեռագիրներու հետ բաղդատած ըլլալով՝ մինակ մէկ տարբերութիւն մը կը նշանակէ: Աւստի մեր հանգանակն ընթերցուածոց տարբերութիւն իրօք ունէր, սակայն ստուգութեամբ հարազատը ընդօրինակողաց հաճոյքէն զանազանելու որոշ հիմ մը չկար: Բայց հիմայ բարեբախտութեամբ՝ օգնութեամբ յոյն բնագրին անանկ վիճակի մէջ ենք որ անկարելի չէ նորէն ամբողջութեան վերածել ան առանձին մասերը՝ որոնք հետզհետէ յընթացս դարուց մէկի ինկած կամ այլայլած են, որով ամենակատար կերեւայ հայուն եւ յունին նոյնութիւնը:

1. Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ, արարիչ երկնի եւ երկրի:

Թէպէտ ոչ ամէն ձեռագիրք, բայց բաւական բազմութիւ են անոնք՝ որոնք կը կարգան արարտողն կամ յարարտողն փոխանակ

<sup>1</sup> Ի վերջ է. Հասորոյ Վարուց սրբոց: